

**«Dasaxos.am-ի ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ»**

Ներկայիս անձնական տվյալների պաշտպանության քաղաքականությունը կիրառվում է «Dasaxos.am» վեբ-կայքի տեղեկատվական համակարգի բոլոր Օգտատերերի նկատմամբ: Անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ հավելյալ իրավունքները կարող են կիրառվել Օգտատերերի որոշակի դասակարգի նկատմամբ:

Օգտատերերը ուղղակի կերպով համաձայնվում են իրենց անձնական տվյալների մշակմանը, ինչպես բնութագրված է ներկայիս Քաղաքականության մեջ: Մշակումը նշանակում է անձնական տվյալների հետ ցանկացած գործողություն՝ անկախ կիրառվող միջոցներից և ընթացակարգից, մասնավորապես՝ տվյալների հավաքագրումը, կուտակումը, պահպանումը, ճշգրտումը, թարմացումը, փոփոխումը և դուրսբերումը, ինչպես նաև դրանց օգտագործումը, փոխանցումը, տարածումը, տրամադրումը, մուտքագործումը, դիմագրկումը, արգելափակումը, ջնջումը և ոչնչացումը:

Սերվիսը տրամադրվում է **«ԱԶ ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ (ՀՎՀՀ 67103685)»**-ի, մասնաճյուղային ընկերությունների, կոնցեսիոներների, կապալառուների և լիցենզատերերի (կապված ընկերությունների) կողմից: Սերվիսը հանդիսանում է տվյալների կառավարողը, պատասխանում է Օգտատերերի անձնական տվյալների մշակման նպատակների համար և կարող է փոխանցել անձնական տվյալները կամ վերջիններիս մշակումը հանձնարարել ցանկացած կապված ընկերություններին օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ

Սերվիսն, առաջարկելով իր Ապրանքը, Օգտատերերի հաղորդակցական ռեկվիզիտների վերաբերյալ տեղեկատվության կարիքն ունի: Ընդ որում, Օգտատիրոջը այն հայցում է այդ տվյալների նվազագույն ծավալը՝ հաճախորդի հետ կապ պահպանելու համար: Վերոնշյալ տվյալների թվում են՝

- Օգտատիրոջ անունը,

- բջջային հեռախոսահամարը,
- էլեկտրոնային փոստի հասցեն:

Պատվերների մշակման ընթացքում Սերվիսը կարող է հավաքել և պահպանել հետևյալ անձնական տեղեկությունը՝ ներառյալ անձնական տվյալները՝

- հասցեն և այլ կոնտակտային տեղեկությունը (կիրառվող Ապրանքներից կախված), սերվիսի միջոցով վճարման դեպքում՝ ֆինանսական տեղեկատվություն, օրինակ՝ կրեդիտային քարտերի և բանկային հաշիվների համարները,
- ապրանքների կիրառման ընթացքում ուղղարկվող հաղորդագրությունները և Սերվիսին ուղղվող հաղորդագրությունները,
- Սերվիսի տեղեկատվական համակարգերի և դրա գործընկերների հետ համագործակցության մասին այլ տեղեկությունը, Սերվիսի կայքերի հաճախման վիճակագրության հավաքագրման արդյունքները և նմանատիպ մուտքագործման համար հանրամատչելի տեղեկատվությունը՝ ներառյալ աշխարհագրական տեղակայման կամ Օգտատիրոջ IP-հասցեի վերաբերյալ տվյալները:
- Անձի հաստատման համար հավելյալ տեղեկություն, որը Սերվիսը կարող է հայցել Օգտատերերից (օրինակ՝ Մասնագետների սերտիֆիկացման համար Սերվիսը կարող է Մասնագետից խնդրել տրամադրելու անձը հաստատող փաստաթղթերի պատճենները, կրթության վերաբերյալ փաստաթղթերի և իրավիճակից բխող այլ փաստաթղթեր՝ Մասնագետի անձը և մասնագիտական տեղեկատվության հաստատման համար):

ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Սերվիսի հիմնական նպատակն է տրամադրել Օգտատիրոջն անվտանգ և արդյունավետ Ապրանքներ: Օգտատերերը համաձայնվում են առ այն, որ Սերվիսը նույնպես կարող է օգտագործել նրանց անձնական տվյալները ներքոնշյալների համար.

- Օգտատերերի հայցմամբ ծառայությունների և հաճախորդների աջակցման տրամադրումը,
- Օգտատերերի հետ համաձայնությունների կատարումը,
- վեճերի լուծումը, արձագանքների հավաքագրումը և անսարքությունների հայտնաբերումը,
- ծառայությունների անհատական կարգավորումը, վերլուծությունը և կատարելագործումը, Ապրանքների տեղեկատվական համալրումը և գովազդը,
- Օգտատերերին Ապրանքների, նպատակային մարքետինգի, ծառայությունների և գովազդային առաջարկությունների մասին իրազեկումը՝ նրա տեղեկատվական նախընտրությունների հիման վրա,
- էլեկտրոնային փոստի և SMS-ի (որից Օգտատերերը կարող են հրաժարվել ցանկացած պահին, փոփոխելով իրենց տեղեկատվական նախընտրությունները) միջոցով անհատական մարքետինգային հաղորդագրությունների առաքումը,
- անձնական տվյալների համեմատումը՝ դրանց ճշգրտման և երրորդ կողմերի հետ ստուգման համար օրենսդրությամբ սահմանված կարգով դեպքերում:

ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ԵՐՐՈՐԴ ԱՆՁԱՆՑ

Մերվիսը չի վաճառում և չի տրամադրում Օգտատերերի անձնական տվյալները երրորդ անձանց Օգտատիրական համաձայնագրով չնախատեսված մարքետինգային նպատակների համար՝ առանց Օգտատերերի ուղղակի համաձայնության: Մերվիսը կարող է միավորել դիմագուրկ տվյալներն այլ տեղեկության հետ, որը ստացված է երրորդ անձանց կողմից, և դրանք օգտագործել ծառայությունների, տեղեկատվական համալրման և գովազդի կատարելագործման և պերսոնալիզացման համար:

Մերվիսը նույնպես կարող է տրամադրել Օգտատերերի անձնական տվյալները

- Ապրանքների տրամադրման համաձայնություններով նախատեսված համագործակցում (օրինակ՝ խարդախությունների հետախուզում, վճարումների հավաքում, հաճախորդների սպասարկում, խորհրդատուների ծառայություններ) իրականացնող ծառայությունների մատակարարներին,
- երրորդ անձանց, ում տրվում են Օգտատերերի անձնական տվյալները, որոնց տրամադրման համար Օգտատերերն ուղղակիորեն դիմում են Սերվիսին (կամ որոնց մասին Օգտատերերն անմիջապես տեղեկացված են և համաձայնվում են հատուկ ծառայությունների կիրառման դեպքում),
- իրավապաշտպան մարմիններին, այլ պետական մարմիններին կամ երրորդ անձանց տեղեկատվության հայցմանն ի պատասխան քրեական գործերի հետախուզման, այլ հակաիրավական գործողությունների շրջանակներում կամ ցանկացած գործունեության մեջ, որը կարող է պատասխանատվության բերել Սերվիսին կամ իր Օգտատերերին,:

Չսահմանափակելով վերոնշյալը, փորձելով հարգել Օգտատերերի անձնական տեղեկատվությունը՝ Սերվիսը չի տրամադրելու անձնական տվյալները ցանկացած անձանց՝ ներառյալ լիազորված պետական մարմինները, առանց օրենքին խիստ համապատասխանող կերպով ձևակերպված հայցման:

COOKIE-ՖԱՅԼԵՐ

Սերվիսը կարող է կիրառել cookie-ֆայլեր և վեբ-փարոսներ (beacons)՝ տեղեկատվության հոսանքի վերլուծության, ծառայությունների անհատական կարգավորման, տեղեկատվական համալրման և գովազդի, ինչպես նաև կայքի արդյունավետության չափման և հուսալիության և անվտանգության ապահովման համար շուկայի հետազոտությունների, շահույթներին հետևելու նպատակաով, ինչպես նաև վեբ-կայքի գործարկման բարելավման, ներկայիս պայմանների իրագործման մշտադիտարկման, օրինական իրավունքների և շահերի պաշտպանության համար:

Անկախ նրանից, որ cookie-ֆայլերը ապաստանավորված են, Օգտատերերը միշտ կարող են հրաժարվել դրանք պահպանել, քանի որ այդ գործառույթը սահմանվում է Օգտատիրոջ դիտարկիչի (բրաուզերի) կարգավորումներով:

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄ

Օգտատիրոջ անձնական տվյալները պահվում են Սերվիսի տեղեկատվական համակարգերում և պահպանվում են տարբեր միջոցներով (ծածկագրման, գաղտնաբառերի, կապված ընկերությունների, աշխատակիցների, կապալառուների մուտքագործման սահմանափակման, ֆիզիկական անվտանգության և այլնի միջոցով)՝ Օգտատերերի անձնական տվյալների չսանկցավորված մուտքից և գաղտնազերծումից պաշտպանության համար:

Կայքի տեղեկատվական համակարգերը, որոնք իրականացնում են Օգտատերերի անձնական տվյալների հավաքագրում, ձայնագրում, համակարգում, կուտակում, պահպանում, ճշգրտում, թարմացում և դուրսբերում, տեղակայվում են Հայաստանի Հանրապետությունում. Օգտատերերի նախնական գրանցման և անձնական տվյալների արդիականացման ժամանակ անձնական տվյալների անդրսահմանային փոխանցում տեղի չի ունենում, բացառիկ դեպքերում այն փոխարինվում է չավտոմատացված մշակման համար հեռավար մուտքի միջոցներով, կամ, եթե նման փոխանցումը անհրաժեշտ է՝ Օգտատերերի գտնվելու վայրերի երկրների օրենքներից ելնելով, այն իրականացվում է անձնական տվյալների ավտոմատացված մշակման պարագայում ֆիզիկական անձանց պաշտպանության մասին Եվրախորհրդի Կոնվենցիային համաձայն:

Օգտատերերի անձնական տվյալների օգտագործումը, փոխանցումը, տարածումը, տրամադրումը, մուտքագործումը, դիմագրկումը, արգելափակումը, ջնջումը և ոչնչացումն իրականացվում են միայն Սերվիսի լիազոր ներկայացուցիչների որոշման հիման վրա՝ գործադրվող օրենսդրության և Օգտատերերի օրինական հետաքրքրություններին համաձայն:

Սերվիսը չի ընդունում Օգտատերերի իրավունքների և օրինական շահերի վրա ազդող որոշումներ՝ անձնական տվյալների բացառապես ավտոմատացված մշակման հիման վրա՝ Օգտատիրոջ կողմից ավտոմատացված համակարգերի ինտերֆեյսի կիրառմամբ հայցման արդյունքների հիման վրա տեղեկատվության տրամադրման դեպքերի բացառությամբ:

Իրավաբանորեն նշանակալի որոշումների կայացման, Սերվիսի հայցմամբ երրորդ անձանց Օգտատերերի հետ համագործակցության դեպքում, Օգտատերերի համաձայնություններին ի կատարում և Օգտատերերի հայցմամբ իրականացվում է անձնական տվյալների չավտոմատացված մշակում՝ այդպիսի համագործակցության նպատակներով պայմանավորված ծավալներով և մշակմամբ չազդվող այլ տվյալների պաշտպանության պահանջների պահպանմամբ:

Եթե ներկայիս Քաղաքականության մեջ այլ բան ուղղակիորեն նշված չէ, սույն փաստաթուղթը վերաբերվում է միայն Օգտատիրոջ կողմից ներկայացված անձնական տվյալների՝ Սերվիսի կողմից օգտագործմանը:

Այն դեպքում, եթե Օգտատերն իր անձնական տվյալները երրորդ անձանց է գաղտնագերծում, ապա տվյալների այդպիսի կիրառման և հայտաբերման նկատմամբ կարող են կիրառվել այլ կանոններ: Սերվիսը Օգտատերերին թախանձորեն խորհուրդ է տալիս նախքան անձնական տվյալների՝ երրորդ անձանց փոխանցումը ճշտել դրանց կիրառման նպատակները:

ՀՆԱՐԱՎՈՐ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սերվիսն անընդհատ կատարելագործում է տվյալներ հավաքագրման, պահպանման և մշակման միջոցները՝ անվտանգության միջոցները ներառյալ: Այդ կապակցությամբ, ինչպես նաև անձնական տվյալների օրենսդրության փոփոխման դեպքերում Սերվիսը ցանկացած պահին կարող է փոխել ներկայիս Քաղաքականությունը՝ դրա մասին Օգտատերերին ծանուցելով Սերվիսի վեբ-կայքում: Նման փոփոխությունների ներառումից հետո Ապրանքների օգտագործման շարունակումը հաստատում է Օգտատիրոջ՝ այդպիսի փոփոխությունների հետ համաձայնությունը, եթե առանձին համաձայնության ստացումը օրենքով չի պահանջվում: